

ԱԵԼԻՏԱ ԴՈԼՈՒԽԱՆՅԱՆ*

*ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, բանասիրական
գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,
Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ
aelita.dolukhanyan@gmail.com*

0000-0001-9526-9464 

DOI: 10.54503/1829-4073-2025.3.113-127

**ՎԱՀԱՆ ՏԵՐՅԱՆԻ «ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳԱԼԻՔ
ՕՐԸ» ԴԱՍԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՎԵՐԺԱՄԱՆԱԿՅԱ
ԱՐԺԵՔԸ**

Ամփոփում

Մինչև Վահան Տերյանը, ավելի ստույգ՝ մինչև 1914 թվականը, երբ կարդացվեց և հետո բազմիցս տպագրվեց Վահան Տերյանի «Հայ գրականության գալիք օրը» մանիֆեստային արժեք ունեցող դասախոսությունը, հայ գրաքննադատությունն արդեն ուներ լուրջ նվաճումներ հանձինս Խ. Աբովյանի, Մ. Նալբանդյանի, Մ. Մամուրյանի, Հ. Սվաճյանի, Գր. Չիլինկիրյանի, Ա. Արփիարյանի, Հ. Թումանյանի, Ն. Աղբալյանի և մեր այլ մեծերի:

Տերյանը հիանալի կրթություն էր ստացել Մոսկվայում: Նախ սովորել էր Լազարյան ճեմարանում, ապա՝ Մոսկվայի համալսարանում, հետո էլ, մի կարճ ժամանակ, Պետերբուրգի համալսարանում:

* Հոդվածը ներկայացվել է 25.11.25, գրախոսվել է 04.12.25, ընդունվել է տպագրության 19.12.2025:

© 2025 հեղինակ(ներ): Բաց հասանելիությամբ հոդված է՝ Creative Commons լիցենզիայի (ոչ առևտրային 4.0 միջազգային լիցենզիա) պայմաններին համապատասխան:

Վահան Տերյանի «Հայ գրականության գալիք օրը»...

Բավական է հիշել նշանավոր Նիկողայոս Մառի հուշերը Վահան Տերյանի մասին: Նա վերջինիս համարում է շատ մեծ բանաստեղծ և թարգմանիչ, նաև գիտական խոր գիտելիքներ ունեցող անհատականություն:

Տերյանը բազմագիտակ էր: Նա մեծ հայրենասեր էր և մտահոգ էր հայ գրականության ապագայով: Ահա հենց այդ մտահոգությամբ էլ նա գիտական խորաթափանցությամբ շարադրում է «Հայ գրականության գալիք օրը» հոդվածը, որը չի կորցրել և երբեք չի կորցնելու իր արդիականությունը: Այդ հոդվածից բազմաթիվ օրինակներով պարզ է դառնում, որ գրականությունը ամբողջ աշխարհում շարունակական առաջընթացի մեջ է: Եվ, քաջատեղյակ լինելով ռուսական ու եվրոպական առաջադեմ գրական միտումներին, Տերյանը մատնանշում է, թե ինչպես կարող է հայ գրականությունը համաքայլ ընթանալ համաշխարհային մտավոր առաջընթացի հետ:

Բանալի բառեր՝ *Վահան Տերյան, գրաքննադատ, Հ.Թումանյան, Ավ.Խսահակյան, նորարար, առաջադիմություն, լեզվի կապարելություն:*

Ներածություն

Վահան Տերյանը՝ պաշտելի հայ բանաստեղծը, ոչ միայն մեծ նորարար է հայ գեղարվեստական խոսքի առումով, այլև նշանավոր գրաքննադատ:

Աշխարհի բոլոր մեծ գրողները մշտապես և առ այսօր շահագրգիռ են իրենց ազգային գրականությունը շարունակական առաջընթացի մեջ տեսնելու խնդրում: Ամերիկյան հայտնի բանաստեղծ և թարգմանիչ Հենրի Լոնգֆելլոն (1807–1882) մեծ եռանդով թարգմանություններ էր կատարում օտար գրականություններից՝ իր ազգայինը հարստացնելու համար: Ռուս գրականության պարծանք Ալեքսանդր Պուշկինը (1799–1837), որը հայտնի դարձավ իր երկրի սահմաններից դուրս,¹ նաև հայտնի գրաքննադատ էր և հաճախ իր գրաքննադատական հոդվածները գրում էր ֆրանսերենով՝ աշխարհին ռուս գրականությունը հասանելի դարձնելու նպատակով: Ռուս բանաստեղծը գրաքննադատությունը համարում էր գիտություն, որը բացահայտում է գեղեցկություններն ու թերությունները արվեստի ու գրականության գործերում: Այնտեղ, որտեղ չկա սեր արվեստի նկատմամբ, չկա նաև քննադատություն:²

¹ The Reader's Companion to World Literature 2002, 606.

² Долуханян 2021, 28.

Դոլոխանյան Ա.

Մ. Նալբանդյանի, Րաֆֆու, Գ. Արծրունու, Հովհ. Թումանյանի ու մինչև Վահան Տերյանը հանդես եկած արևելահայ ուրիշ գրողների գրաքննադատական աշխատությունները, անշուշտ, ձևավորել են Վահան Տերյանի գրաքննադատական հայացքները: Տերյանի հայացքների վրա ազդեցություն է ունեցել արդեն խիստ զարգացած ռուս գրաքննադատական միտքը: Չմոռանանք, որ Վիսարիոն Բելինսկին հեղինակություն էր Եվրոպայի համար ու 1840-ից համարվում էր XIX դարի ամենամեծ գրաքննադատը, որի գրվածքներին անտարակույս ծանոթ էր Վահան Տերյանը: Բնածին ուսումնաստենչությունը Տերյանին հնարավորություն է տալիս խոր գիտելիքներ ձեռք բերել հոչակավոր Լազարյան ճեմարանում, այնուհետև Մոսկվայի համալսարանի պատմաբանասիրական ֆակուլտետում: Նա Պետերբուրգի համալսարանում աշակերտել է հոչակավոր հայագետ, կովկասագետ, լեզվաբան, հնագետ Նիկողայոս Մառին: Վերջինս սրտառույզ հուշեր է թողել Շոթա Ռուսթավելու «Ընձենավորը» հրաշալի թարգմանած, խոշոր բանաստեղծ, վաղամեռիկ Տերյանի մասին:³

Վահան Տերյանի նորարարական տաղաչափությանը նվիրված գիտական մեծարժեք գիրք է հրատարակել ակադեմիկոս Էդվարդ Զրբաշյանը՝ 1995-ին:⁴

Ա. Ալիխանյանը առանձին հետազոտություն է նվիրել Վահան Տերյանի պետական գործունեությանը:⁵ Նույն հեղինակի գրքի ռուսերեն թարգմանությունը լույս է տեսել 1960-ին:⁶

Վահան Տերյանի կյանքի առանձին դրվագներ պատկերված են Ս. Սուքիասյանի՝ բանաստեղծին նվիրված գրքում:⁷

Տերյանը գրաքննադատ

Գևորգ Էմին-Տերյանը «Վահան Տերյան, Անտիպ և անհայտ էջեր» կարևոր գրքում լրացնում է տերյանագիտության բացեր՝ տպագրելով անտիպ նամակներ, հոդվածներ, գրախոսություններ, նաև հրապարակելով շատ հետաքրքիր լուսանկարներ: Նա ուսումնասիրել է ներկա տերյանագիտությունը, ծանոթ է այդ գրողի ստեղծագործության հետազոտական զինանոցի

³ Էմին-Տերյան 2014, 457–468:

⁴ Զրբաշյան 1995:

⁵ Ալիխանյան 1956:

⁶ Алиханян 1960.

⁷ Սուքիասյան 1959:

Վահան Տերյանի «Հայ գրականության գալիք օրը»...

հիմնական աշխատություններին ու տերյանագիտությունը բաժանել է հինգ փուլերի:

Տերյանագիտության առաջին փուլի հետաքրքիր դրսևորումներից է 1910 թվականին «Հերմես» տպարանում լույս տեսած Արսեն Տերտերյանի «Վահան Տերյան, ցնորքի, ծարավի և հաշտության երգիչը» գիրքը, որը բնականաբար չէր կարող անդրադարձ ունենալ Տերյանի գրաքննադատական հոդվածներին, որովհետև դրանք դեռ չէին գրվել: Սակայն հեղինակը Տերյանի «Մթնշաղի անուրջները» գիրքը համարում է «մի նոր ու խոշոր երևույթ մեր գրականության համար»:⁸

Ա. Տերտերյանը հայ արձակի տիպական գեղարվեստի ներկայացուցիչ է համարում Շիրվանզադեին, իսկ «հուզական ապրումների մաքուր արտահայտիչ»՝ Վահան Տերյանին:⁹

Հրապարակախոսական ու գրաքննադատական ուղղվածություն ունի Տերյանի՝ Լ. Տոլստոյի թաղման արարողությանը նվիրված «Յասնայա Պոլյանայում» հոդվածը, որում վերջինս տազնապում է, որ մեծ մարգարե ռուս գրողի իդեալները կարող են մոռացվել, «սակայն նրա իդեալը՝ մեր բոլորիս իդեալը պետք է լինի, որովհետև նա անժխտելի է հավիտենական»:¹⁰

1911-ին է գրվել Տերյանի «Անունը կա, ամանումը չկա (Թռուցիկ նկատողություններ)» ենթախորագիրն ունեցող հոդվածը, որը նվիրված է հայ թարգմանական գրականությանը: Տերյանն արդեն Լազարյան ճեմարանից գիտեր, թե V դարում, որը կոչվում է Ոսկեդար, հայերն ինչ մեծարժեք թարգմանական գրականություն են ունեցել, մասամբ որի պատճառով էլ զարգացել է հայագիտությունը Եվրոպայում:

Նա թվարկում է այն երկերի անունները, որոնք Կովկասի Հայոց Հրատարակչական ընկերությունը որոշել է հրատարակել հայերենով: Դրանք են՝

1. Լ. Տոլստոյի «Պատերազմ և խաղաղությունը» և լավագույն երկերի ժողովածուն երկու հատորով,
2. Ֆ. Դոստոևսկու «Հանցանք և պատիժը»,
3. Վ. Գարշինի «Գեղարվեստագետը», «Կարմիր ծաղիկը», «Սպան և ծառան» և այլն:

⁸ Տերտերյան 1910, 3:

⁹ Տերտերյան 1910, 7:

¹⁰ Տերյան 1961, 216:

Դոլուխանյան Ա.

Տերյանը զարմանում է, թե ինչպես կարելի է Տոլստոյի լավագույն գործերը տեղավորել երկու հատորում: Մի՞թե «Աննա Կարենինան» լավագույն գործ չէ, սակայն այն ծավալուն գիրք է և արդեն համարվում է համաշխարհային գրականության լավագույն գործերից: Եվ ինչու Վ. Գարշինը, և ոչ թե Ա. Չեխովը, Պ. Ուսպենսկին, Վ. Կորոլենկոն, Ն. Գոգոլը, Մ. Լերմոնտովը և ուրիշներ:

Նրա կարծիքով Տոլստոյը հայերենով պետք է ունենա բազմահատոր հրատարակություն: Նա պահանջում է, որ հայերեն թարգմանվեն Ֆ. Դոստոևսկու, Լ. Տոլստոյի, Ն. Գոգոլի, Ի. Գոնչարովի լավագույն գործերը:

Ընկերությունը որոշել էր հրատարակել Հոմերոսի «Իլիականը» և «Ոդիսականը», սակայն հրաժարվեց, երբ լուր ստացվեց, որ Կ. Պոլսում դրանք թարգմանվում են:

Նա բազմաթիվ դրույթներով հիմնավորում է, թե որքան կարևոր է հայ գրականության և հայերենով կարդացող ընթերցողի համար թարգմանական գրականությունը. «Եվ մեր գրականության զարգացման ամենամեծ գրավականը կլինի թարգմանական գրականության զարգացումը մեզանում»:¹¹

Տերյանը թեև բավական մանրամասն գրել է Ալեքսանդր Ծատուրյանի կյանքի ու ստեղծագործության մասին, շեշտել է. «Ես միայն գծագրել կամեցա Ծատուրյանի գործունեության գլխավոր մոմենտները»:¹²

«Հայ գրականության գալիք օրը»

Վահան Տերյանի մասին գրվել են բազմաթիվ գրքեր ամենատարբեր հեղինակների կողմից: Դրանք նվիրված են եղել գրողի կյանքին, հասարակական գործունեությանը, ստեղծագործությանը, գրական կապերին, սիրո և հայրենիքի թեմաներով գրված բանաստեղծություններին, գրաքննադատական հայացքներին: Գրողին նվիրված գրքերի թվերի քանակով առաջին տեղում է պրոֆեսոր Վաչե Պարտիզունին, որը մի քանի տասնամյակ տարբեր դիտակետերից քննել է Տերյանի ստեղծագործությունը: Թվարկենք այդ գրքերը՝

1. Վահան Տերյան, Ստեղծագործությունը, 1968,
2. Տաղանդի ուժը, 1977,
3. Ավ. Իսահակյանը և Վ. Տերյանը, 1975,

¹¹ Տերյան 1961, 222:

¹² Տերյան 1961, 242:

4. Տերյանի կենսապատումը, 1984,

5. Վահան Տերյանի հետ, 1989 և այլն:

«Վահան Տերյան, Ստեղծագործությունը» հանգամանալի ու ծավալուն գրքում Պարտիզունին մեջբերում է կատարում Տերյանի հետ մտերմություն ունեցած առաջնակարգ գրականագետ Տիգրան Հախումյանի «Վահան Տերյանի գրական-գեղարվեստական հայացքները» հոդվածից. «Իր բազմաթիվ ասույթներում հայ հասարակական կյանքի և գրականության խնդիրների կապակցությամբ Տերյանը միշտ անշեղ կերպով ամենաառաջավոր և խորապես դեմոկրատական հայացքներ է արտահայտում հայ գրականության «գալիք օրվա» մասին: Այստեղ նա առողջ օպտիմիստ է, ազնիվ հայրենասեր, իսկական հումանիստ, պատմականորեն մտածող արվեստագետ և իր հարազատ ժողովրդի բարձր կուլտուրայի ու գրականության իդեական-գեղարվեստական հարստության համար անձնվեր պայքարող»:¹³

Բազմաթիվ տերյանագետներ «Հայ գրականության գալիք օրը» համարել են մանիֆեստ. «Գրաքննադատական մանիֆեստի արժեք ունի Վ. Տերյանի «Հայ գրականության գալիք օրը» դասախոսությունը, որը կարդացել է 1914-ի ապրիլի 30-ին, Թիֆլիսի Երաժշտական Ընկերության դահլիճում»:¹⁴

Դեռ Պլատոնի ու Արիստոտելի գրաքննադատական հայացքներում կա այն ճշմարիտ միտքը, թե արվեստն ու գրականությունը պետք է օգնեն մարդուն առավել լավը դառնալուն:¹⁵

Արդեն ՀՀ ԳԱԱ-ի հրատարակած «Հայ քննադատության պատմություն» գրքի I հատորում երկու անգամ նշվում է, թե Վ. Տերյանը մեծ ավանդ ունի հայ գրաքննադատական մտքի պատմության մեջ:¹⁶

Ակադեմիկոս Ս. Սարինյանը «Հայ գրականության գալիք օրը» և «Հոգևոր Հայաստան» գրվածքներում տեսնում է ծրագրային մտորումներ ոչ միայն հայ գրականության ապագայի, այլև Վ. Տերյանի սեփական պոետական զգացողությունների մասին:¹⁷

XX դարասկզբի համաշխարհային դասական գրականության միտումներից ելնելով՝ Տերյանն իր գնահատականներն է տալիս հայ նոր գրականության երևելի դեմքերին: Նա ոչ թե հերքում է վերջիններիս պատմական

¹³ Պարտիզունի 1968, 351:

¹⁴ Դոլուխանյան 2009, 86:

¹⁵ McDonald 2007, 45:

¹⁶ «Հայ քննադատության պատմություն» 1985, 33–34:

¹⁷ «Հայ նոր գրականության պատմություն» 1979, 461:

դերը, այլ անհանգստանում է առաջընթաց չունենալուց: Գրականությունը աշխարհում շարունակական զարգացման մեջ է, նույնը վերաբերում է նաև XX դարի հայ գրականությանը: Նա բնականորեն իր ուսուցիչներ է համարում Ավետիք Իսահակյանին ու Հովհաննես Թումանյանին: Թումանյանին համարելով մեծ վարպետ ամեն կողմերով, գնահատելով վերջինիս գեղարվեստական հրաշալիքները՝ Տերյանը եզրահանգում է, թե Թումանյանը չի լինելու ապագա պոեզիայի ցուցիչ, «սակայն նա կմնա իբրև մի ունիկում»:¹⁸

Նա անցնում է նաև հայ արձակին ու դրամատուրգիային: Ունիկում է համարում նաև Գ. Սունդուկյանի «Պեպո» պիեսը, սակայն հայ ապագա դրամատուրգիայի ուղի հարթող ճանաչում է Ալ. Շիրվանզադեին: Պեպոյի կերպարը համարում է կենդանի մարդու տիպ, որն իր կյանքի նկատմամբ ունեցած պահանջներով հավիտենական է և դարձել է խորհրդանիշ:¹⁹

Նա համոզված է, որ Թումանյանը կգնա իր եզակի ուղիով ու հայ գրականությանը կտա շատ փայլուն ու չքնադ գործեր, իսկ մեր գրականության մյուս մեծ հսկան՝ Իսահակյանը, դեռ որոնումների մեջ է:²⁰ Տերյանը մարգարեացել է, որովհետև Իսահակյանը «Ուստա Կարո» վեպի խնդրում մնաց որոնումների մեջ, իսկ Թումանյանը կյանքի վերջին տարիներին գրեց իր հանճարեղ քառյակները: Չմոռանանք, սակայն, որ Իսահակյանը մասնակից էր Տերյանի, որպես բանաստեղծի լինելիությանը:²¹

Իրավացի է Տերյանը, երբ ռեալիզմ ու ռոմանտիզմ գրական մեթոդները տարբեր ձևով է տեսնում հայ ու եվրոպական գրականությունների մեջ: XX դարում հայ իրականության մեջ առաջացել է նոր սերունդ, որին խորթ չէին եվրոպական մշակույթն ու գրականությունը:

Հայ գրականության մեջ, Խորենացուց ու Եղիշեից սկսած, հայրենասիրության գաղափարն իշխում է մինչև XX դարը: Հայրենիքի ճակատագիրը Տերյանը կապում է կրթության ու դպրոցի հետ: Բոլորովին ժխտելով հայ եկեղեցու ազգապահպան դերը՝ Տերյանն առաջ է քաշում բարձր տիպի աշխարհիկ դպրոցի գաղափարը: Նա ցավով նշում է, թե որքան արժեքներ կորստի են մատնվել՝ ստեղծված լինելով հեթանոսական ժամանակներում: Տերյանը խիստ պահանջներ է դնում եկեղեցու առաջ՝ հորդորելով դուրս գալ տիրացուական մակարդակից: Սակայն նա մոռանում է, որ պետականութե-

¹⁸ Տերյան 1961, 271:

¹⁹ Տերյան 1961, 272:

²⁰ Տերյան 1961, 274:

²¹ Պարտիզունի 1975, 21:

Վահան Տերյանի «Հայ գրականության գալիք օրը»...

յուն չունեցող Հայաստանում եկեղեցին եղել է կաշկանդված: Նա բերում է մի երիտասարդ հայ հրապարակախոսի այն միտքը, թե Հովհաննես Այվազովսկին եթե ապրեր ու սովորեր Հայաստանում, «պիտի ծխական դպրոցի, իսկ լավագույն դեպքում թեմական դպրոցի նկարչության ուսուցիչ լիներ, ոչ ավել»:²²

Տերյանը խիստ դժգոհ է իր ժամանակի որոշ գրաքննադատների՝ հայ գրողներին տված գնահատականներից: Որոշ քննադատներ Ալ. Ծատուրյանին գաղափարական առումով Հ. Թումանյանից, Հ. Հովհաննիսյանից, Ավ. Իսահակյանից ավելի բարձր են դասում:²³ Նա խիստ քննադատում է պատմաբան Լեոյին՝ Շիրվանզադեի «Նամուսի» գլխավոր հերոս Սեյրանի կերպարը սխալ մեկնաբանելու համար:

Տերյանը 1915-ի ազգակործան ցեղասպանությունից առաջ անհնար է համարում «ժյոն թուրքերի» (երիտթուրքերի) ու պանարմենիզմի միացումը:²⁴ Բանաստեղծի կարծիքով «Միայն կուլտուրական ազգը կարող է ստեղծել ազգային կուլտուրա»:²⁵

Տերյանն իր դասախոսության մեջ անդրադարձել է նաև հայոց գրական լեզվի և ոճի խնդիրներին:

Հայագիտության մեջ կա այն ճշգրիտ կարծիքը, թե Տերյանը հայ գրական լեզվի նորարարներից է. «Լեզուն կուլտուրայի ամենաճշգրիտ ու անսխալական նշանացույցն է», - ասում է Տերյանը:²⁶ Նա իրավացիորեն նշում է, թե արևելահայ գրականությունը կրել է ռուսաց լեզվի ու ռուս գրականության ազդեցությունը: Այս առումով հենց «Հայ գրականության գալիք օրը» գրվածքում տեսնում ենք ռուսերենի մի շարք բառեր, որոնք իրենց հերթին ռուսերենին անցել են ֆրանսերենից:

Տերյանը չի ընդունում Մխիթարյան հայրերի այն միտքը, թե օտար բառերը պետք է դարձնել հայաշունչ՝ դրանք թարգմանելով: Այս հարցում շահեկան էին Մխիթարյանները, որովհետև մեր օրերի հայերենը որպես ընտանի բառ *печь*-ը անվանում է վառարան, *пальто*-ն՝ վերարկու, *интеллигент*-ը՝ մտավորական, *культура*-ն՝ մշակույթ և այլն:

²² Տերյան 1961, 258:

²³ Տերյան 1961, 263:

²⁴ Տերյան 1961, 267:

²⁵ Տերյան 1961, 268:

²⁶ Տերյան 1961, 282:

Այս առումով նա վկայակոչում է ռուս իրականության մեջ այն իրողությունը, երբ «նրանք էլ «գալոշի» տեղ առաջարկում էին «мокросты» ասել, իսկ «տրոտուարի» տեղ՝ «топотолище» և այլն»:²⁷

Տերյանը մեջբերում է նշանավոր բանագետ Մաքս Մյուլլերի լեզվի մասին ասույթը. «Եթե լեզուն բնության ստեղծագործությունն է, ապա դա բնության ամբողջ ստեղծագործությունը պսակող մի հրաշալիք է, որ պահպանված է եղել մարդու համար, եթե դա մարդկային ստեղծագործության արդյունք է, ապա նա բարձրացնում է ու հասցնում մարդուն աստվածային աստիճանի, եթե Աստծո պարգևն է՝ ապա դա նրա ամենամեծ ու ամենաթանկագին պարգևն է...»:²⁸

Հայոց լեզվի բառական հարստության խնդրում Տերյանը պաշտպանում է Ն. Մադի տեսակետը: Տերյանը խոսում է լեզուների փոխազդեցության մասին, օրինակներ բերելով Եվրոպայի գլխավոր լեզուները: Հատուկ մանրամասնում է ռուսաց լեզվի ծագումնաբանությունը, որն իր բարձունքին հասավ Պուշկինի շողշողուն գրչի տակ:²⁹

Իր ժամանակի արևելահայ գրական լեզվի սկիզբը համարելով Խ. Աբովյանին՝ Տերյանը նշում է, թե ինչ ուղիով է այն ընթացել: Ըստ նրա՝ «Նույն Թումանյանի լեզուն ապրել է մի շատ բնորոշ ու նշանակալի էվոլյուցիա»:³⁰ Թումանյանը սկզբում առավել մեծ քանակի բարբառային բառեր է օգտագործել, հետագայում հրաժարվել է շատ բարբառային բառերից ու թողել միայն այնպիսիները, որոնք չկային գրական լեզվում. «Սակայն նա պահպանել է իր լեզվի մեջ դեռևս երկու բառ - դա հռչակավոր էս-ն ու էն-ն է: Այդ էս-ն ու էն-ը այս այնի հանդեպ մեր գրականության մեջ առանձին բարբառների գործածության վերջին զինվորներն են»:³¹

Գրական լեզվի՝ հայ ժողովրդի կյանքում ամրապնդելը Տերյանը համարում է կարևորագույն ազգային խնդիր: Նոր գրական լեզուն ստացել է քաղաքացիական իրավունք. Հայաստանում ուր էլ գնաս ու խոսես այդ լեզվով, քեզ կհասկանան: Մինչդեռ Ղարաբաղի բարբառն անհասկանալի է Ախալքալակում, Քանաքեռի բարբառը՝ Կարսում, զոկերի բարբառը՝ Թիֆլիսում:³²

²⁷ Տերյան 1961, 281:

²⁸ Տերյան 1961, 281–282:

²⁹ Տերյան 1961, 287:

³⁰ Տերյան 1961, 288:

³¹ Տերյան 1961, 288:

³² Տերյան 1961, 289:

Որոշակիորեն Տերյանի դասախոսությունը ազգային կողքին ստանում է նաև քաղաքական շեշտվածություն: Եվրոպան զարգացած է և՛ գիտության, և՛ մշակույթով: Հայաստանը, որը չունի պետականություն, պետք է ձգտեր դեպի եվրոպական առաջադիմությունը: Տերյանը հիմնալի գիտեր Հայաստանի պատմությունը, դեռևս հեթանոս ժամանակներից եկող բարձր մշակույթը, քրիստոնեական Ոսկեդարը: Դա ամենից կատարյալ ձևով արտահայտված է «Մի՛ խառնեք մեզ ձեր վայրի, արջի ցեղերին» սկզբածքով հրաշք քերթվածում: Տերյանն իրավացիորեն մերժում է և՛ ազգային սնապարծությունը, և՛ գոհունակ ինքնախաբեությունը: Նա խոսում է Հայաստանի քաղաքական կողմնորոշման մասին՝ Թուրքիա, թե Ռուսաստան: Տերյանը որոշակիորեն չի հավատում Թուրքիայի պայմաններում հայերի ազատագրմանը. «Ես տաճկահայկական հարցի լուծմանը Թուրքիայի սահմաններում չեմ հավատում: Լավագույն լուծումն այդ հարցի համարում եմ Ռուսիայի գրավումը տաճկահայկական նահանգների»:³³ Հետագայում Տերյանը նույն կարծիքին չէր: Նա մտածում էր հայերի ինքնուրույնության մասին:

Մեր օրերի նշանավոր հայագետ Ժան-Պիեռ Մահեն և նրա կինը՝ Անին, Փարիզում 2012-ին հրատարակում են «Հայաստանի պատմություն» ծավալուն աշխատությունը, որում մանրամասն խոսվում է 1826–28 թթ. և 1829-ի ռուս-պարսկական և ռուս-թուրքական պատերազմների մասին, որոնց շնորհիվ ազատագրվում է ոչ միայն Արևելահայաստանը, այլև Արևմտահայաստանի մեծ մասը: Սակայն հատկապես Անգլիան պահանջում է, որ պարսից շահը հետ գրավի Արևելահայաստանը՝ խոստանալով ռազմական օգնություն: Հետևանքը լինում է 1829-ի փետրվարի 11-ին կատաղած պարսիկ ամբոխի՝ Թեհրանում Ռուսաստանի դեսպանատան վրա գրոհելը: Սպանվում են դեսպան Գրիբոյեդովը ու երեսուներկու կազակներ:³⁴ Անգլիացիները օգնում են նաև օսմանցիներին և պահանջում Ֆրանսիայից, Գերմանիայից, Ավստրիայից կանգնեցնել ռուսական զորքի առաջընթացը Օսմանյան կայսրության մեջ:³⁵

Այս փաստերը հայտնի էին Տերյանին ու նպաստում էին նրա ռուսական կողմնորոշմանը:

³³ Տերյան 1961, 292:

³⁴ Դոլուխանյան 2020, 212:

³⁵ Դոլուխանյան 2020, 213:

Այս կողմնորոշումն է պատճառը նաև, որ նա հիացմունք չունի Թուրքիայի որոշ հայ քաղաքական գործիչների նկատմամբ:

Հազար անգամ իրավացի է Տերյանը, որը ազգային բարձրարվեստ գրականության մեջ տեսնում է համամարդկայինը. «Թումանյանի «Փարվանան» բոլոր ժողովուրդների համար հասկանալի է և գեղեցիկ, ինչպես և Պուշկինի «Ոսկե ձկնիկը»...Եթե Չեխովին բերեին Ախալքալակ կամ Շուշի, անշուշտ նա նույնքան սքանչելի պատկերներ կտար Շուշիի կամ Ախալքալակի կյանքից»:³⁶ Կարող ենք հավելել՝ դրող գրող Չինգիզ Այտմատովը գրում է Ղրղստանի գյուղական կյանքի մասին, հայ գրող Հրանտ Մաթևոսյանը՝ հայ գյուղի մասին, սակայն երկուսի գրածներն էլ համամարդկային են ու բարձրարժեք:

Տերյանը հայ գրականությունը կամենում է կապել առաջադեմ գաղափարների հետ, նաև արվեստի ու ոճի առումով պահանջում ձգտել կատարելության:

Գրականությունը արվեստի մի ճյուղ է, որի արժեքը պայմանավորված է մշակույթի ընդհանուր զարգացման շղթայում կատարելագործմամբ: Եթե որևէ ազգ կամենում է ունենալ ճոխ գրականություն, ապա պետք է ունենա ճոխ նկարչություն, թատրոն, երաժշտություն և այլն:³⁷

Տերյանը հավատացած է, թե որևէ ժողովրդի թվաքանակը կարևոր չէ հանճարներ ունենալու համար: Կարևորը տվյալ ժողովրդի զարգացած լինելու աստիճանն է: Պետք չէ, ուրեմն, կուռք դարձնել մեծաքանակ ազգերի հնարավորությունները: Եթե հայերն ունեն Պ. Ադամյանի նման արտիստ, ուրեմն նրանք այլ բնագավառներում էլ կարող են ունենալ կարևոր ներկայացուցիչներ:³⁸

Եզրակացություն

Վահան Տերյանի «Հայ գրականության գալիք օրը» դասախոսությունը կարդացվել է 1914 թվականի ապրիլի 30-ին՝ Թիֆլիսի Երաժշտական ընկերության դահլիճում: Այն համարվում է հայ գրաքննադատական մտքի գոհարներից և ընկալվել է որպես մանիֆեստ:

Տերյանը մեծ նորարար է ոչ միայն հայ բանաստեղծության պատմության մեջ, այլև հայ գրաքննադատության:

³⁶ Տերյան 1961, 995:

³⁷ Տերյան 1961, 301:

³⁸ Տերյան 1961, 302:

Վահան Տերյանի «Հայ գրականության գալիք օրը»...

Հայ դասական բանաստեղծը ստացել էր հիանալի կրթություն: Հատկապես Մոսկվայի Լազարյան ճեմարանի կրթական միջավայրը, լեզուների իմացությունը, գիտելիքների պաշարը, հայ և համաշխարհային պատմության ու գրականության իմացությունը նպաստել են այն կարևոր դրույթների առաջադրմանը, որ նա ներկայացնում է և որով պետք է ընթանար հայ գրականությունը:

Տերյանը մեծ հույսեր է կապում հայ նոր մտավորականության հետ, որը համընթաց է քայլում աշխարհի զարգացած երկրների մտավոր կյանքի հետ: Ամեն մի երկրի առաջընթացի համար կարևոր է համարում ազգային շահի ճիշտ ընկալումը, որի հիմքում բացառում է ազգային սնապարծությունը և անիմաստ հանգստությունը:

Նա համոզված է, որ իր երկիրը կարող է համընթաց քայլել աշխարհի առաջադեմ երկրների հետ մշակույթի ու գրականության բոլոր բնագավառներում:

ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Ալիխանյան Ս. 1956., Վահան Տերյանի պետական գործունեությունը, Երևան, Հայպետհրատ, 192 էջ: (*Alikhanyan, Vahan Teryani petakan gortsneutyun@, Haypethrat, Yerevan, 1956, 192 p.*). *Alikhanyan S., Vahan Teryan's Stat Activities, Haypethrat, Yerevan, 192 p. (in Armenian).*

Դուլխանյան Ա. 2009, Դրվագներ հայ գրաքննադատական մտքի պատմությունից, Երևան, «Զանգակ-97» հրատ., 223 էջ: (*Dolukhanyan A., Drvagner hay graqnadatakan mtqi patmutyunits, "Zangak-97", Yerevan, 2009, 223 p.*). *Dolukhanyan A., Episodes from the history of Armenian literary criticism, Zangak-97, Yerevan, 2009, 223 p. (in Armenian).*

Դուլխանյան Ա. 2020, Ժան-Պիեռ Մահեն հայագետ, Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 379 էջ: (*Dolukhanyan A., Jan-Pier Mahen hayaget, HH GAA "Gitutyun" hrat., Yerevan, 2020, 379 p.*). *Dolukhanyan A., Jean-Pierre Mahe armenologist, NAS RA Gitutyun, Yerevan, 2020, 3379 p. (in Armenian).*

Էմին-Տերյան Գ. 2014, Վահան Տերյան. Անտիպ և անհայտ էջեր (նամակներ, հոդվածներ, գրախոսություններ), Երևան, «Տիգրան Մեծ» հրատ., 736 էջ: *Emin-Teryan G. 2024, Vahan Teryan, Antip ev anhayt ejer (namakner, hodvatsner, grakhosutyunner), Yerevan, "Tigran Mets" hrat. 736 p.) Emin- Teryan G., Vahan Teryan, Unprinted and Unknown Pages /letters, articles, reviews/, Tigran Mets, Yerevan, 2014, 736 p. (in Armenian).*

Հայ նոր գրականության պատմություն, 1979, հ. 5, Երևան, ՀՍՍՌ ԳԱ հրատ., 1012 էջ: (*Hay nor grakanutyun patmutyun erku hatorov, h. 1, HSSR GA hrat., Yerevan, 1979, 1012 p.*). *History of New Armenian Literature, Arm. SSR NA pub., Yerevan, 1979, 1012 p. (in Armenian).*

Դոլովսանյան Ա.

Հայ քննադատության պատմություն երկու հատորով, 1985, հ. 1, Ընդհանուր խմբագրությամբ Ս.Ն.Սարինյանի, Երևան, ՀՍՍՌ ԳԱ հրատ., 458 էջ: (**Hay qnnadatutyun patmutyun erku hatorov**, h.1, *ǝndhanur khmbagrutyamb S.N. Sarinyani, HSSR GA hrat., Yerevan, 1985, 458 p.*). A history of Armenian criticism in two volumes , t. 1, General editor: Sergey Sarinyan, Arm.SSR NA, Yerevan, 1985, 458 p. (in Armenian).

Պարտիզունի Վ., Վահան Տերյան, Ստեղծագործությունը, «Հայաստան» հրատ., Երևան, 1968, 688 էջ: (**Partizuni V., Vahan Teryan, Stexhtsagortutyunǝ, "Hayastan" hrat., Yerevan, 1968, 688 p.**). **Partizuni V., Vahan Teryan, Works, Hayastan, Yerevan, 1962, 688 p.** (in Armenian).

Պարտիզունի Վ., 1975, Ավ.Իսահակյանը և Վ.Տերյանը, Երևան, «Հայաստան» հրատ., 230 էջ: (**Partizuni V., Av.Isahakyanǝ ev V.Teryanǝ, "Hayastan" hrat., Yerevan, 1975, 230 p.**). **Partizuni V., Av. Isahakyan and V. Teryan, Hayastan, 1975, 230 p.** (in Armenian).

Պարտիզունի Վ. 1977, Տաղանդի ուժը, Երևան, «Սովետական գրող» հրատ., 397 էջ: (**Partizuni V., Taghandi uǝǝ, "Sovetakan grogh" hrat., Yerevan, 1977, 397 p.**). **Partizuni V., The power of Talent, Sovetakan grogh, Yerevan, 1977, 397 p.** (in Armenian).

Պարտիզունի Վ. 1984, Տերյանի կենսապատումը, Երևան, «Սովետական գրող» հրատ., 355 էջ: (**Partizuni V., Teryani kensapatumǝ, "Sovetakan grokh" hrat., Yerevan, 1984, 355 p.**). (in Armenian).

Պարտիզունի Վ. 1989, Տերյանի հետ, Երևան, «Հայաստան» հրատ., 328 էջ: (**Partizuni V., Vahan Teryani het, "Hayastan" hrat., Yerevan, 1989, 328 p.**). **Partizuni V., With Teryan, Hayastan, Yerevan, 1989, 328 p.** (in Armenian).

Ջրբաշյան Էդ. 1995, Վահան Տերյանի տաղաչափական համակարգը, Երևան, «Պարբերական» հրատ., 223 էջ: (**Djrbashyan Ed., Vahan Teryani taghachapakan hamakargǝ, "Parberakan" hrat., Yerevan, 1995, 223 p.**). Jrbashyan Ed., Vahan Teryan's metric system, Parberakan, Yerevan, 1995, 223 p. (in Armenian).

Սուքիասյան Ս. 1959, Էջեր Վահան Տերյանի կյանքից, Երևան, «Հայպետհրատ», 304 էջ: (**Sukiasyan S., Edjer Vahan Teryani kyanqits, Haypethrat, Yerevan, 1959, 304 p.**). **Sukiasyan S., Pages from the life of Vahan Teryan, Haypethrat, Yerevan, 1959, 304 p.** (in Armenian).

Տերտերյան Ա. 1910, Վահան Տերյան, Թիֆլիս, «Հերմես» տպարան, 105 էջ: (**Terteryan A., Vahan Teryan, "Hermes" tparan, 1910, 105 p.**). **Terteryan A., Vahan Teryan, Hermes, 1910, 105 p.** (in Armenian).

Տերյան Վ. 1961, Երկերի ժողովածու երեք հատորով, Երևան, Հայպետհրատ, 507 էջ: (**Teryan V. Erkeri joghovatsu ereq hatorov, h.II, Yerevan, 1961, 507 p.**). **Teryan V., Collection of Works in three volumes, Haypethrat, Yerevan, 1961, 507 p.** (in Armenian).

Алиханян С.Т., Армгосиздат, Ереван, 1960, 150 с. (**Alikhanyan S.T., Vahan Teryan, Armgosizdat, Yerevan, 1960, 150 p.**) (in Russian).

Վահան Տերյանի «Հայ գրականության գալիք օրը»...

Долуханян А., Встречи с русской литературой в Армении, Сборник статей, Изд. XI “Принт”, Ереван, 2021, 83 с. (*Dolukhanyan A., Meetings with Russian literature in Armenia, Print, Yerevan, 2021, 83 p.*) (in Russian).

Mcdonald R., *The Death of the Critic*, Cromwell Press, London, 2007, 160 p.

The Reader's Companion to World Literature, second edition, Penguin Books, London, 2002, 805 p.

Fayolle R., *La critique*, Armand Colin, Paris, 1978, 295 p.

AELITA DOLUKHANYAN,

corresponding member of NAS RA, Doctor of philological sciences, professor, head of the chair of ancient and medieval armenian literature and its teaching methodology at the ASPU named after Kh. Abovyan
aelita.dolukhanyan@gmail.com

0000-0001-9526-9464 

THE TIMELESS VALUE OF VAHAN TERYAN'S LECTURE “THE COMING DAY OF ARMENIAN LITERATURE”

Summary

Even before Vahan Teryan, and more precisely, before 1914 when his lecture “The Coming Day of Armenian Literature” — a valuable manifesto — was delivered and subsequently published many times, Armenian literary criticism had already achieved serious success in the persons of Khachatur Abovyan, Mikael Nalbandyan, Hovhannes Tumanyan, Nikol Aghbalyan, and other great figures of ours.

V. Teryan received a brilliant education in Moscow. After graduating from the Lazaryan Seminary, he studied at Moscow University, and later — for a short time — at Petersburg University.

It is sufficient to recall the memoirs of the famous scholar Nikolai Marr about Vahan Teryan. N. Marr considered the latter a great poet and translator, as well as a person possessing profound scientific knowledge.

Դիմիտրիան Ա.

Teryan was an erudite man and a great patriot, concerned about the future of Armenian literature, which prompted him to write the article “The Coming Day of Armenian Literature,” an essay that remains relevant to this day.

The numerous examples presented in the article demonstrate that literature is undergoing steady progress on a global scale. And being familiar with the advanced trends of Russian and European literature, Teryan points out the path by which Armenian literature can keep pace with progressive global intellectual thought.

Keywords: *Vahan Teryan, literary critic, H. Tumanyan, Av. Isahakyan, innovator, European, progress, perfection of language.*